ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«12» ապրիլի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՄՈՒՇԵՂ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն կուսակցական պետական գործիչ Մուշեղ Դանիելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան 33 հասցում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության,ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ **Աննա Ասատրյան**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՄՈՒՇԵՂ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում կուսակցական, պետական գործիչ Մուշեղ Դանիելյանի /1900-1938թթ./ գործունեությունը:

Մ. Դանիելյանը 1936թ. սեպտեմբերին հաստատվել է ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի անդամ: 1937թ. սեպտեմբերից զբաղեցրել է հայկական ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահի պաշտոնը: 1938թ.-ին զնդակահարվել է որպես ժողովրդի թշնամի, իսկ 1955թ.-ին հետմահու արդարացվել:

Հարցը քննարկվել է Երևանի ավագանու կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի 2010թ. ապրիլի 1-ի նիստում և քվեարկության արդյունքում անցել միաձայն:

Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության,ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ **Աննա Ասատրյան**